Արտահանման խրախուսման գործում շատ կարևոր է ստեղծել հատուկ մասնագիտացված, արտահանմանը աջակցող մասնագիտացված մարմին, որի գործունեության ոլորտում առանձնակի տեղ պետք է զբաղեցնի, արտաքին առևտրային հարցերը ԵՄ երկրների հետ:

Ծառայությունների առևտրի, ներդրումների մրցակցության և պետական աջակցության, ապրանքային առևտրի կարգավորման և այլ կազմակերպչական կարևոր խնդիրների բարելավման միջոցով զգալիորեն կարող է կարգավորվել Հայաստանի տնտեսական միջավայրը և խորացվել ԵՄ կառույցների հետ տնտեսական համագործակցության և ինտեգրման խնդիրները:

ԵՄ երկրների հետ Հայաստանի առևտրատնտեսական կապերի զարգացման գործում կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև համատեղ և փոխադարձ մարքեթինգային հետազոտությունների իրականացումը, արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպումը, ՀՀ և ԵՄ երկրների գործարարների պարբերաբար հանդիպումները, համապատասխան անհրաժեշտ տեղեկատվության փոխադարձ տրամադրումը և այլն:

Կարևոր ենք համարում նաև ԵՄ և Հայաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման համալիր միջոցառումների հետազոտման հարցերը՝ առևտրային, ֆինանսատնտեսական, հարկային, մաքսային և այլ բնագավառներում հնարավոր արտոնությունների տեսանկյունից, ինչը իր հերթին կարող է նպաստել ՀՀ տնտեսության մեջ ԵՄ-ից ներդրումների ավելացմանը, դրանց ներգրավման և օգտագործման հիմնահարցերի բարելավմանը: Ավելին, հաշվի առնելով ԵՄ-ում առկա առաջընթացը՝ ռեսուրսախնայող, գիտատար, տեխնոլոգիատար արտադրությունների զարգացման բնագավառներում տեղայնացնել այդ փորձը ՀՀ տարածքում, ինչը, վերջին հաշվով, կնպաստի տնտեսական ինտեգրացիայի խորացմանը ԵՄ հետ:

Ինչ վերաբերում է ՀՀ ԵՄ անդամակցության խնդրին, ապա, մեր կարծիքով, եթե Հայաստանի Հանրապետության տարեկան միջին աճի տեմպերը պահպանեն իրենց երկնիշ բնույթը, ապա համախառն ազգային արտադրանքի 1 շնչին ընկնող ցուցանիշով Հայաստանը կարող է հասնել ԵՄ միջին մակարդակին, իսկ դա նշանակում է, որ հեռանկարում Հայաստանը կարող է հավակնել ԵՄ անդամակցությանը: Միաժամանակ գերխնդիր է մնում Հայաստանում թողարկվող ապրանքների մրցունակության բարձրացումը միջազգային շուկայում, արտահանվող ապրանքների դիվերսիֆիկացիան: Բացի այդ, հանրապետության համար կարևոր նշանակություն ունեն ֆինանսական համակարգի հետագա բարեփոխումները, որոնք հնարավորություն կտան արտասահմանից եկող կայուն և մեծածավալ տրանսֆերտները վերափոխել ներդրումների: Տնտեսական աճի հիմնական գործոնը պետք է դառնա արտաքին շուկան, քանի որ ներքին շուկան խիստ սահմանափակ է:

Մյուս կողմից ԵՄ քաղաքականությունը Կովկասում ունի տարածաշրջանային բնույթ. այսինքն՝ ԵՄ-ն ցանկանում է իր կազմում տեսնել արդեն տնտեսապես ինտեգրված Կովկաս, և այն, որ Հայաստանը իր տնտեսական զարգացմամբ էապես տարբերվում է: Ըստ էության ԵՄ անդամակցումը մի կողմից ՀՀ համար կբացի հսկայական եվրոպական շուկան, մյուս կողմից անպաշտպան կարող է մնալ ՀՀ շուկան, որը ստիպված կլինի դիմակայել հզոր եվրոպական ֆիրմաների մրցակցությանը: Այս պարագայում ՀՀ տնտեսական օգուտները և վնասները մեծապես պայմանավորված կլինեն ՀՀ տնտեսության հետագա զարգացման տեմպերից և եվրոպական շուկայում մինչև անդամակցումը արդեն որոշ ապրանքների գծով մրցակցային առավելության առկայությունից: Այս ամենը հնարավոր է միայն ՀՀ տնտեսական ներուժի ճիշտ գնահատման և մրցակցային առավելություններ ունեցող ճյուղերի զարգացման շնորհիվ:

ՆԱՐԻՆԵ ԱԴՈՆՑ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային տուրիստական կազմակերպության (ЮНВТО) տվյալների համաձայն տուրիստական ոլորտը ձևավորում է համաշխարհային ՀՆԱ-ի 11%-ը, չնայած նրա բաժինը համաշխարհային հիմնական ֆոնդերում չի գերազանցում 7%-ը: Ոլորտում շրջանառվում է ավելի քան 4 տրիլիոն ԱՄՆ դոլար: Տուրիստական համաշխարհային շուկայի մասնակից երկրների մեկ երրորդի համար տուրիզմից ստացվող եկամուտները բյուջեի հիմնական մուտքերն են ապահովում, իսկ 80-ից ավելի երկրներում տուրիզմից ստացվող մուտքերն ընդգրկվում են բյուջե ձևավորող հոդվածների առաջին հնգյակի մեջ: Այդ ոլորտն ունի ներդրումային բարձր բազմարկիչ՝ մեկ ներդրված միավորը տնտեսության մյուս ճյուղերում բերում է չորս միավոր գումարային եկամուտ: Նման բազմարկիչային գործակից առկա է նաև բնակչության զբաղվածության ոլորտում՝ տուրիզմում մեկ աշխատանքային տեղի ստեղծումն իր հետ բերում է տուրիստական արտադրանքի ստեղծմանը մասնակից հարակից ոլորտներում չորս աշխատանքային տեղերի ստեղծում:

Տուրիստական ծառայությունները համաշխարհային առևտրի առավել տարածված օբյեկտներից են: Տուրիստական շուկան ենթակա է տարատեսակ գործոնների ազդեցության, այդ իսկ պատճառով ներքին և միջազգային տուրիստական շուկաներում նրա զարգացման որոշ միտումների բացահայտման կանխատեսումը ստեղծում է պայմաններ մարքեթինգային հարաբերությունների պլանավորման օբյեկտիվության բարձրացման համար:

Ահաբեկչությունը, բնական աղետները, համաճարակների վտանգը, նավթի գների բարձրացումը, արտարժույթի կուրսի տատանումը, ինչպես նաև տնտեսական և քաղաքական անկայունությունը վերջին տարիների տուրիստական ոլորտի առջև ծառացած հիմնահարցերից մի քանիսն են: Չնայած դրան ողջ աշխարհում

տուրիստների թիվը 2005թ. գերազանցել է բոլոր սպասվելիք կանխատեսումները և հասել 808 մլն. մարդ տարեկան ցուցանիշին: Աճը կազմում է մոտ 42 մլն. լրացուցիչ տուրիստներ, որոնցից ավելի քան 18 մլն. եղել են Եվրոպայում, 11-ը՝ Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, 7-ը՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, 3-ը՝ Աֆրիկայում, իսկ 2-ը՝ Մերձավոր Արևելքում: Չնայած այն հանգամանքին, որ համաշխարհային տուրիստական շուկայի աճն առավել չափավոր է դարձել, այն մոտ 1.5% գերազանցում է 4.1% կազմող աճի տեմպի երկարաժամկետ միջին տարեկան կանխատեսումը[1]:

Վերջին մի քանի տարիների ընթացքում տուրիզմի ոլորտը դարձել է առավել ճկուն: Չնայած արտաքին միջավայրի (օրինակ ահաբեկչություն, բնական աղետներ) անկայունությանը, 2002թ.-ից սկսած ողջ աշխարհում հանգստյան վայրեր այցելած տուրիստների քանակը հիմնականում աճել է: Տուրիստական ծառայությունների շուկայի զարգացման համար հատկապես կարևոր են տնտեսական միջավայրում առկա փոփոխությունները: ԱՄՀ (Արժույթի միջազգային հիմնադրամի) հրատարակած տվյալների համաձայն 2005թ.-ին 1.5%-ով աճած ՀՆԱ-ի համաշխարհային ծավալը շարունակում է ցուցաբերել կայուն աճի միտումներ:

ԱՄՀ-ի տվյալների համաձայն աշխարհում առայժմ պահպանվում է որոշակի անհավասարակշռվածություն՝ վճարման հաշվեկշռի մեծ պակասուրդ և ԱՄՆ աճող պարտքը գոյություն ունեն Ճապոնիայի և ասիական զարգացող որոշ շուկաների, ինչպես նաև նավթարդյունահանող պետությունների (ինչպիսիք են Ռուսաստանը և մերձարևելյան երկրները) ընթացիկ բյուջեի նշանակալից ավելցուկի հետ համատեղ: Դրա հետ մեկտեղ իրավիճակը բարդեցնում են նաև երկու հիմնական գործոններ՝ նավթի գների աճը և տոկոսադրույքի հնարավոր աճը որոշ առավել նշանակալից տուրիստական շուկաներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Միացյալ Թագավորությունը և եվրոպական տարածաշրջանը:

Եթե քննարկենք իրավիճակը նավթի գներից տուրիստական ծառայությունների նկատմամբ պահանջարկի կախվածության տեսակետից, ապա պահանջարկի վրա գների ազդեցությունը մինչև վերջերս սահմանափակ էր: Տուրիստական օպերատորների և տուրիստական գործակալությունների հարցումը ցույց է տվել, որ նավթի գների տեղի ունցած բարձրացումից միայն մի փոքր տոկոսն է մտել հաճախորդի կողմից վճարվող վերջնական գնի մեջ: Նույնիսկ շատ ավիաընկերությունների ծառայությունների գների աճը դեռևս չի նվազեցրել օդային փոխադրամիջոցների պահանջարկը:

Օդային փոխադրամիջոցների միջազգային ասոցիացիայի տվյալների համաձայն (IATA) 2005թ.-ի հունվարից մինչև նոյեմբեր ընկած ժամանակահատվածում ուղևորների հոսքը աճել է 7.7%: Վերջին ճգնաժամերի ընթացքում նավթի գների աճը տուրիստական շուկայի վրա ցուցաբերել է ոչ թե ուղղակի, այլ կողմնակի ազդեցություն, քանի որ իր հետ բերել է տնտեսական վիճակի վատթարացում և, հետևապես, բնակչության գնողունակության անկում: Եթե նախկինում նավթի գների աճը բացասական նշանակալի ազդեցություն էր ունենում համաշխարհային ողջ տնտեսության վրա և, որպես հետևանք, տուրիստական շուկայի վրա ևս, ապա ներկայումս համաշխարհային տնտեսությունը պահպանել է որոշակի համեմատական կայունություն, ինչին նշանակալի չափով նպաստել է Չինաստանում և Հնդկաստանում առկա պահանջարկը: Քանի որ այդ պահանջարկը կարող է երաշխավորել, որ նավթի գները չեն ընկնի մինչև պատմականորեն ձևավորված իրենց միջին գնահատականը, ապա սպասվում է, որ տուրիստական շուկան կշարունակի հետևել նախկինում ձևավորված դրական միտումներին:

Մյուս գործոնը, որն ունակ է տնտեսական աճն ինչ որ ձևով դանդաղեցնելու, մասնավորապես, տնային տնտեսությունների եկամուտները նվազեցնելու, տոկոսադրույքների աճն է: Այդ գործոնի ազդեցությունը առավել ակնառու է ԱՄՆ-ում, որտեղ կառավարությունը փորձում էր նրանց աստիճանաբար մեծացումը օգտագործել աճող սղաճի սահմանափակման, ապառողական վարկերի գծով պարտավորությունների նվազեցման և անշարժ գույքի նկատմամբ պահանջարկի աննախադեպ աճի դադարեցման համար: Եվրոպական տարածաշրջանում 2002թ.-ի կեսերից 2%-ի սահմաններում պահպանվող այդ ցուցանիշը դեռևս ավելի ցածր է քան ԱՄՆ-ում, չնայած այն բանին, որ 2005թ.-ի վերջին Եվրոպական կենտրոնական բանկը ավելացրել է այդ ցուցանիշը 0.25%-ով (Միացյալ Թագավորությունում տոկոսադրույքների մեծությունը 2005թ.-ին արդեն կազմել է 4.5%):

Զարգացած տնտեսություններում բնակչության զբաղվածության մակարդակը, որպես կանոն, աճում է, եթե տնտեսական աճի տեմպերը գերազանցում են 2%-ի ցուցանիշը, և համապատասխանաբար նվազում են, եթե այդ իջնում է 2%-ից ներքև:

ԱՄՀ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2005թ.-ին բոլոր զարգացած երկրներում գործազրկության մակարդակը նվազել էր 0.2%-ով (6.3-ից մինչև 6.12%-ի): 2006թ.-ին այն շարունակել էր նվազել և կազմել էր 5.9%՝ հասնելով մինչ 2001թ.-ի ցուցանիշներին: Չնայած եվրոպական տարածաշրջաններում նկատվում է գործազրկության մակարդակի ընդհանուր նվազում (8.9-ից մինչև 8.7%), տուրիստական հիմնական շուկաներում, ինչպիսիք են Գերմանիան, 2005թ.-ին նկատվում էր զբաղվածության շուկայում իրավիճակի որոշակի վատթարացում: Մյուս կողմից, իսպանական շուկայում նկատվել էր զբաղվածության մակարդակի անկում 0.9%-ով, ինչից հետո այդ ցուցանիշը հասել էր վերջին 10 տարիների իր ամենացածր մակարդակին՝ 9.1%: Իսպանական տնտեսության նպաստավոր իրավիճակը, այնպիսի ցուցանիշների բարելավման հետ համատեղ ինչպիսիք է բնակչության զբաղվածության մակարդակը, երկրի տուրիստական շուկայի վրա նշանակալից ազդեցություն է ունենում: Տուրիստական ծառայությունների համաշխարհային շուկայում 12 մլրդ. ԱՄՆ դոլար շրջանառությամբ 13-րդ տեղը զբաղեցնող Իսպանիան տուրիստական ծառայությունների սպառման աննախադեպ աճ է գրանցել՝ մինչև 2005թ.-ի հոկտեմբերը 26%, ինչին նախորդել է 22%-ը 2004թ.-ին:

[1] Моисеева Н.К..-«Стратегическое управление туристской фирмой». 2-ое издание М.: «Финансы и статистика». 2007г., ст.7.

ԱՄՆ-ում գործազրկության մակարդակը ևս նվազել է (2004թ.-ի 5.5%-ից մինչև 2005թ.-ի 5.2%): Կանադան ևս գրանցել է այդ ցուցանիշի նվազում 0.4%-ով 2004թ.-ի հետ համեմատած: Նույնը կարելի է ասել Ճապոնիայի (2004թ.ի 4.7%-ից մինչև 4.3% 2005թ.-ին) և զարգացող ասիական տնտեսությունների մասին[1]:

Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային տուրիստական կազմակերպության (ЮНВТО) տուրիզմի գծով փորձագետների հիմնական եզրակացություններից մեկը այն է, որ տուրիզմի ոլորտում այլևս չեն լինի «սովորական» տարիներ: Յուրաքանչյուր տարի իր հետ կբերի նոր անորոշակիություններ և հիմնահարցեր: Ընդհանուր առմամբ արվող կանխատեսումները օպտիմիստական են:

Սակայն կան անորոշակիության երեք գործոններ, որոնք դեռևս պահպանվում են 2007թ.-ին:

Առաջին հերթին, կարելի է ակնկալել, որ պահպանվում է ահաբեկչության վտանգը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ վերջին ժամանակներս նրա վտանգը առավել սահմանափակ է և կարճաժամկետ: Ամենուր տուրիստները ռիսկը վերցրել են իրենց վրա և ահաբեկչության վտանգը նրանց արդեն չի կանգնեցնում: Երկրորդ, էներգակիրների գների բարձրացումը, սղաճի տեմպերի արագացումը և տոկոսադրույքների ավելացումը կարող են, վերջին հաշվով, փոփոխել իրադարձությունների զարգացման սցենարը: Մինչև վերջերս դա իրենից նշանակալից հիմնահարց չէր ներկայացնում, քանի որ գների աճը հիմնականում հանդիսանում էր կայուն տնտեսական աճի և, հետևապես, էներգիայի նկատմամբ պահանջարկի աճի արտացոլում: Եթե նման իրավիճակը պահպանվի և փոխանցվի Ասիայում տնտեսական աճի ցուցանիշներին, ապա, հնարավոր է, որ այն սկսի նշանակալից ազդեցություն ունենալ տուրիզմի ոլորտի վրա:

Եվ վերջապես, տուրիստական ոլորտի համար երրորդ լուրջ վտանգը կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների հետագա տարածումը (օրինակ թռչնագրիպը, այն աշխարհում գոյություն ունի արդեն մի քանի տարի: Ներկայումս այդ հիվանդությամբ հիվանդանում են հիմնականում թռչունները և վարակված թռչյունների հետ անմիջական շփման մեջ գտնվող սակավաթիվ մարդիկ):

Ուղևորությունների վտանգավորության ու անցանկալիության վերաբերյալ տեղեկատվությունը և անցագրերի ստացման անհրաժեշտությունը նախկինի պես հանդիսանում են տուրիստական ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները: Հայտնի է, որ անցագրային պահանջների վերացումը կամ պարզեցումը դրականորեն է ազդում ճանապարհորդությունների պահանջարկի վրա: Այդ իսկ պատճառով անցագրային խիստ ռեժիմն անվերջ ձգվող բյուրոկրատական գործընթացների և բարձր լրացուցիչ ծախսերի հետ համատեղ կարող են թուլացնել ճանապարհորդությունների պահանջարկը նույնիսկ անվտանգության երաշխավորման դեպքում:

2006թ.-ի տվյալների համաձայն, եթե Եվրոպայում, Ամերիկայում և Աֆրիկայում նախատեսվում էր համաշխարհային միտումների համապատասխանող միջազգային տուիստական շուկաների քանակի համեմատաբար կայուն աճ, ապա Ասիական-Խաղաղօվկիանոսյան երկրներում և Մերձավոր Արևելքում սպասվում է նախորդ տարվա առանց այդ էլ բարձր մակարդակը գերազանցող աճ: Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում սպասվում էր աշխարհում ամենաբարձր աճի տեմպերը (9%), ինչը հաստատում է աշխարհի այդ մասում տուրիստական ոլորտի զարգացման դինամկիան: Ըստ կանխատեսման երկրորդ ցուցանիշը կկազմի 8% և կգրանցվի Մերձավոր Արևելքում, ինչը համապատասխանում է նախորդ տարիների կայուն ցուցանիշներին և պայմանավորված է միջին դասի շուկայի զարգացմամբ, ենթակառուցվածքների և մարքեթինգի զարգացման գործընթացում կառավարության և մասնավոր հատվածի կողմից արվող անընդհատ ներդրումներով, ինչպես նաև տուրիզմի մասին օրենդրության կատարելագործմամբ: Նախատեսվում է, որ 2007թ.-ին Աֆրիկայում աճի տեմպերը կնվազեն 10-ից մինչև 6%: Եվրոպայում ներգնա տուրստների քանակը կաճի 3%-ով: Այդ տարածաշրջանի տուրիստական զարգացած շատ վայրերում կնկատվի համեմատաբար դանդաղ, բայց կայուն աճ, իսկ դեպի նոր զարգացող վայրեր ճանփորդությունների պահաջարկը, ինչը միջինից բարձր էր, կնվազի մինչև իր նորմալ մակարդակը: Ամերիկայում տուրիստների քանակի աճը ևս գնահատվում է որպես չափավոր և կազմում է 3% (Գծանկար 1):



Գծանկար 1. Միջազգային տուրիստների մուտքը[2]

[1] Чудновский А.Д. Управление индустрией туризма: учебное пособие. -4-е изд., испр. и доп. – М.: КНОРУС, 2007г., ст. 52.
[2] Моисеева Н.К., «Стратегическое управление туристской фирмой». 2-ое издание М.: «Финансы и статистика». 2007г., ст.23.

Ներկայումս տարբեր երկրներում զարգացած է շատ անհավասարաչափ: Տուրիստները առավելապես դուրս են գալիս զարգացած երկրներից, որոնք Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային տուրիստական կազմակերպության տերմինաբանության համաձայն համարվում են տուրիստների մատակարարներ: Դրանք այն երկրներն են, որտեղ երկրիսահմաններից դուրս ուղևորությունների մեկնողների թիվը գերազանցում է բնակիչների տաս տոկոսը: Նման երկրների թիվը մեծ չէ (12-17), սակայն նրանց թիվը մշտապես համալրվում է: Բացի Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի զարգացած երկրներից, Ճապոնիայից մինչև վերջերս նրանց թվին էին պատկանում Արևելյան Եվրոպայի և Պարսիկ ծոցի տարածաշրջանի պետությունները: Ներկայումս նրանց տեղն ակտիվորեն գրավում են զարգացող այնպիսի երկրներ ինչպիսիք են Կորեայի Հանրապետությունը, Սինգապուրը և այլն:Տուրիզմի զարգացման երկարաժամկետ հեռանկարները Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային տուրիստական կազմակերպության փորձագետների համաձայն օպտիմիստական են: Նրանց կանխատեսումների համաձայն 2010թ.-ին աշխարհում տուրիստական ճամփորդության կմեկնի մոտ 1մլրդ. մարդ, 2020թ.-ին՝ մինչև 1.5մլրդ, իսկ տուրիզմից ստացվող եկամուտները կկազմեն ավելի քան 2 տրլիոն ԱՄՆ դոլար:

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

21-րդ դարի սկզբին, երբ ԱՊՀ անդամ երկրների մեծ մասին բնորոշ և նախկինից մասամբ պահպանված կապերի ու ներուժի գործող զարգացման իներցիոն մոդելը իրեն քիչ-քիչ սպառում է, նախկին միասնական խորհրդային պետություն կազմող երկրները մոտեցել են իրենց պատմության սկզբնական պահին և օրվա խնդիր է դարձել զարգացման ուղիների որոնումը, (որը ներառում է արտաքին կողմնորոշիչների փնտրումից մինչև ներքին սոցիալ-տնտեսական մոդելի ստեղծումը): Իսկ աշխարհում գերիշխող միտում է հանդիսանում միջպետական, նախ և առաջ, տնտեսական միավորումների ստեղծումը (ինչպես օրինակ Եվրամիությունը, NAFTA-ն և այլն):

Ռուսաստանի, Չինաստանի, Եվրամիության նման հզոր կառույցների հարևանությամբ գտնվող նորանկախ պետությունները պետք է ճիշտ կարողանան կողմնորոշվել, թե ինչ համակարգի են ուզում ինտեգրվել: Արդյոք նրանք պատրա՞ստ են քաղաքական և տնտեսական որոշումներ կայացնելիս զոհաբերել իրենց ինքնուրույնությունը՝ հանուն առավել հզոր, վերազգային կառույցներին մասնակցելու օգուտների: Կամ՝ արդյո՞ք ինտեգրացիոն սցենարը միակ հնարավոր ուղին է զարգացման խնդիրների լուծման գործում:

Այս հարցերին պատասխանելու անհրաժեշտության խնդրին է բախվել նաև Հայաստանը: Որպես փոքր, սուղ բնական ռեսուրսներով ցամաքային երկիր՝ Հայաստանը չունի այլընտրանք, քան լինել հնարավորինս բաց միջազգային առևտրի համար և լիարժեք ինտեգրվել գլոբալ տնտեսությանը: Այս ուղղությամբ կատարվել և կատարվում են լուրջ աշխատանքներ, որոնցից առավել հիշատակման արժանի է ԱՀԿ-ին և միջազգային առևտուրը պարզեցնելու ուղղությամբ աշխատող բազմաթիվ միջազգային կազմակերպություններին անդամակցելու փաստը:

Հայաստանի ներդրումային և առևտրային քաղաքականությունը միջազգային կազմակերպությունների և վարկանիշային կառույցների կողմից բազմիցս հիշատակվել է որպես «ԱՊՀ-ում ամենաբաց քաղաքականություններից» մեկը: Հայաստանում չկան սահմանափակումներ գումարների փոխանցման և փոխանակման համար, չեն սահմանափակվում նաև օտարերկրացիների՝ սեփականություն ունենալու իրավունքները, օտարերկրացի աշխատողների քանակն ու ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը:

Սակայն Հայաստանը ունի մի շատ լուրջ խնդիր՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը լինելով Հայաստանի անվտանգությանն ու արտաքին քաղաքականությանը սպառնացող ամենալուրջ վտանգը՝ բացասական հետևանքներ ունի նաև տնտեսական զարգացման համար: Այդ մասին պաշտոնական հայտարարություններ արել են ինչպես ԱՄՆ-ի և և Եվրամիության մի շարք երկրների կառավարությունները, այնպես էլ Թուրքիան, որն այս հակամարտությունը համարում է Կովկասում քաղաքական կայունության հաստատման, տնտեսական զարգացման և տարածաշրջանային համագործակցության հիմնական խոչընդոտը:

Այս հակամարտության հիմնական առանձնահատկությունն այն է, որ քաղաքական տեսանկյունից պատերազմի մասնակից կողմերը երեքն են, իսկ Ադրբեջանը հակամարտության կողմի որոշման խնդիր է դրել ու չի ընդունում ԼՂՀ-ն՝ որպես հակամարտության կողմ: Բացի այդ, հակամարտությունը երկու կողմից էլ դիտավորյալ ձգձգվում է, որովհետև մի կողմից հայերը հույս ունեն ստատուս-քվոյի ձեռքբերման, իսկ մյուս կողմից ադրբեջանցիները ամեն ինչ կապում են նավթային բումի և բանակի հզորացման հետ:

Կողմերից յուրաքանչյուրը, այդ իմաստով կարծում է, թե ժամանակն աշխատում է իր օգտին. Բաքուն պահանջում է տարածքային ամբողջականություն, իսկ հայերը՝ ազգային ինքնորոշման իրավունք և վիճելի հարցերի փաթեթային լուծում, իսկ ժամանակը, ըստ էության, թշնամանքի ու դիվանագիտական անհամաձայնության հողի վրա աշխատում է ի վնաս երկու կողմերի տնտեսական զարգացման:

Համաշխարհային փորձը նմանատիպ հարցերը լուծում է բնակչության ազատ կամքը քվեարկությունների միջոցով արտահայտելով և չնայած 1991թ. նման լուծում արդեն տրվել է, Ադրբեջանը պնդում է, որ իրենց ձայնը չեն արտահայտել ղարաբաղյան ադրբեջանցիները: Կրկնակի հանրաքվե իրականացնելը հայերի կողմից գրեթե բացառվում է, սակայն նույնիսկ այդ դեպքում արդյունքները ակնհայտ պարզ են, որովհետև Ղարաբաղում այլևս ոչ մի ադրբեջանցի չկա: